Վճռաբեկ դատարանն անկանխատեսելի է

29.11.2011 12:03



http://www.a1plus.am/am/politics/2011/11/29/ara-zohrabyan

Վճռաբեկ դատարանն անկանխատեսելի է

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդին առընթեր գիտա-վերլուծական կենտրոնին անհանգստացնում է ՀՀ վճռաբեկ դատարանին օրենքով տրված լիազորությունները և նրա դերը՝ դատական համակարգում:

Գիտա-վերլուծական կենտրոնի համակարգող, փաստաբան Արա Զոհրաբյանը ահազանգում է՝

«Բարձրագույն դատական ատյան համարվող ՀՀ վճռաբեկ դատարանն այսօր կանխատեսելի չէ հասարակության համար:

Բողոքները բացառապես իր հայեցողությամբ վարույթ ընդունելու հնարավորությունն առանց օբյեկտիվ չափանիշների կիրառող ՀՀ վճռաբեկ դատարանն այդպես էլ խաղի միատեսակ կանոններ չսահմանեց:

Բողոքը վարույթ ընդունելու մասին որոշումները չեն պատճառաբանվում, ինչի հետևանքով փաստաբանները և այլ իրավաբանները չեն կարողանում հասկանալ, թե որ ծանրակշիռ փաստարկն է հիմք հանդիսացել բողոքը վարույթ ընդունելու համար, կամ օրենքի միատեսակ կիրառության համար հարցն ինչ խորությամբ է բարձրացվել կամ ՀՀ վճռաբեկ դատարանի որ որոշմանն է հակասել ստորադաս դատարանի որոշումը ինչ փաստական հանգամանքների նույնությամբ կամ նմանությամբ:

ՀՀ վճռաբեկ դատարանի այս հայեցողական լայն հնարավորությունը մեծ կոռուպցիոն ռիսկեր է պարունակում:

ՀՀ վճռաբեկ դատարանը նաև չի փորձում իրավունքի զարգացման մեջ իր ազդեցությունն ունենալ (հանուն արդարության պետք է նշել, որ քրեական գործերով, որոշ հարցերով ՀՀ վճռաբեկ դատարանը շատ համարձակ օբյեկտիվ որոշումներ է կայացրել): Այս է պատճառը, որ որոշ հարցերում փաստաբաններն իրենց հույսը դնում են ՀՀ սահմանադրական դատարանի վրա (չնայած, որ ՍԴ-ն չորրորդ ատյան չէ և իրականացնում է միայն սահմանադրական արդարադատություն):

ՀՀ վճռաբեկ դատարանը բողոքները վերադարձնելիս օգտագործում է այնպիսի ձևակերպումներ, որոնք նույնպես անհանգստացնում են փաստաբաններին: Օրինակ, նշում է, որ բողոք բերողը խախտել է դատավարական կանոնը, քանի որ բավարար չափով չի պատճառաբանել վարույթ ընդունելու հիմքերը: Ստացվում է, որ փաստաբանը օգտվելով բողոք բերելու իր իրավունքից արդեն օրենք է խախտում:

Գտնում ենք, որ սա պատճառներից մեկն է, որ հասարակությունը չի վստահում դատական համակարգին»:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })